ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն Պատմություն

Թեմա Ժամանակակից մեթոդների կիրառումը հայոց պատմության ուսուցման գործընթացում : Արցախյան շարժումը:

Կատարող Մարգարյան Բելա Գագիկի
Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար Արմինե Եփրիկյան
Ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում

ԵՐԵՎԱՆ 2022

Բովանդակություն

Ներածություն 3-4

Ժամանակակից մեթոդների կիրառումը հայոց պատմության ուսուցման գործընթացում : Արցախյան շարժումը :. 5-13

Եզրակացություն 14

Օգտագործված գրականության ցանկ 15

Ներածություն

Երբ խոսում է պատմությունը ,
առանձին անհատները պետք է լռեն :
Աֆրա Բեն

Պատմության առարկայի դասավանդման գլխավոր նպատակն է աշակերտների մոտ ձևավորել հայեցակարգային մոտեցումներ ազգային արժեհամակարգի , աշխարհայացքի, աշխարհըմբռնման հանգուցային հարցերի նկատմամբ :Առաջնահերթ խնդիր է նաև օգնել աշակերտին ՝ զարգացնելու իր կարողություններն ու հմտությունները , իմաստավորելու և յուրացնելու ազգային արժեհամակարգի տարրերը :

Պատմության դասի նպատակն է ապահովել, որ աշակերտները տիրապետեն պատմական գիտելիքին , նպաստել բարոյական որակների զարգացմանը և զարգացնել արդիականության հետ կապված պատմական փորձը վերլուծելու հմտություններ : Պատմության դպրոցական դասընթացը , որպես առարկա հանրակրթական դպրոցում , պետք է ուղղված լինի մարդկության պատմական ուղու , սոցիալական փորձի , գիտելիքների հիմունքների յուրացմանը , պատմական դարաշրջանի մասին կոնկրետ պատկերացումների ձևավորմանը , պատմական աղբյուրների հետ աշխատելուն : Պատմական իրադարձությունները լուսաբանելիս անհրա-եշտ է օգտագործել փոխաբերական և էմոցիոնալ միջոցների ողջ զինանոցը , քանի որ անբավարար հուզական ազդեցությունը առաջացնում է պատմական գործընթացի որոշակի պարզեցում, չափից ավելի սոցիոլոգիա :

Անհերքելի է գիտելիքների, մտավոր կարողությունների դերը մարդկանց աշխատանքային գործունեության արդյունավետության բարձրացման գործում :Սակայն հաճախ սովորողները դժվարանում են կողմնորոշվել գործնականում, երբ անհրաժեշտ է գիտելիքները կիրառել կոնկրետ , ոչ

ստանդարտ իրավիճակներում, այսինքն նրանց << պարունակությունը >> խանգարում է նրանց շարժունակությանը : Խոսքը վերաբերում է գիտելիքի շարժունակության , մտքի ճկունության , ակտիվության , ինքնուրույնության բացակայությանը , գիտելիքները գործնականումն կիրառելու անկարողությանը :

Ժամանակակից տարբեր մեթոդների և ռազմավարությունների կիրառումը բացառիկ դեր կարող է ունենալ սովորողների տարածական պատկերացումների և երևակայության ձևավորման ու զարգացման գործում :

Հետազոտական աշխատանքի նպատակը: Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ժամանակակից մեթոդների և ռազմավարությունների օգտագործումը պատմության ուսուցման ընթացքում :

Որպես օրինակ կօգտագործեմ Արցախյան շարժումը թեման :

Աշխատանքը կազմված է ՝ ներածական մասից, հիմնական մասից եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից :

Ժամանակակից մեթոդների կիրառումը պատմության ուսուցման ընթացքում :

Արցախյան շարժումը :

Մեր ժողովրդի անցած ուղին , կենսագրությունը , դարերի ընթացքում կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը առանձնահատուկ նշանակություն ունեն հայ ժողովրդի համար : Սեփական պատմությունը իմանալը հնարավորություն է տալիս իրականացնելու ազգային նպատակները, պահպանելու և ապահովելու հայի, որպես տեսակի , շարունակությունը :Հայոց պատմության յուրահատուկ գծերից է ազատության և անկախության պահպանման կամ վերականգնման համար մղված դարավոր պայքարը : Այդ պատճառով է, որ առարկայի դասավանդման մեջ մեծ տեղ են զբաղեցնում Հայոց պատմության հերոսական էջերը, ազգային- ազատագրական պայքարի նախորդ և նորագույն փուլերը :

Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա ՀՀ ապագա քաղաքացիներին ուսումնառության ընթացքում ձեռք բերված գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները , հայկական քաղաքակրթության դարավոր ավանդույթները , փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել ազատության և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետականությանը , պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժեղովրդի ունեցած տեղի և դերի մասին :Հայոց պատմություն հանրակրթական առարկայի գլխավոր նպատակը պատմական գիտելիքներով զինված, ազգային ինքնագիտակցությամբ օժտված , ազգային և համաաժմարդկային արժեքներով առաջնորդվող,ազգային նկարագիր ունեցող հայ մարդու և քաղաքացու ձևավորումն է :

Այս նպատակից էլ բխում են հենևյալ հիմնական խնդիրները .

1. սովորողին հաղորդակին դարձնել նախորդ սերունդների ստեղծած հոգևոր-մշակութային արժեքներին ,
2. ցույց տալ Հայաստանի և հայ ժողովրդի պատմա-մշակութային ժառանգության տեղը և դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ,
3. ծանոթանալ և իմանալ սեփական ակունքները, ժողովրդի պատմական ընթացքը ժամանակի հոլովույթում,
4. օգնել հասկանալ պատմական իրադարձությունները, երևույթները և դասեր քաղել պատմությունից,
5. ցույց տալ սերունդների կապը, ինչը կնպաստի պատմական ժառանգականության ընկալմանը և պատմական փորձի յուրացմանը,
6. ամբողջացնել և համակարգել հայագիտական առարկաներից սովորողների ստացած գիտելիքները :[1]

Մեր պատմության նորագույն շրջանի հերոսական էջերից է հանդիսանում Արցախյան առաջին պատերազմը : Աշխատանքը ամբողջական դարձնելու համար մեթոդական օրինակները կբերեմ այս թեմայից :

Տվյալ թեման դասավանդելու ժամանակ կարող ենք օգտագործել <<պատմությունը ցույցի պաստառներով >> մեթոդը :[2] Սովորողները պետք է պատրաստեն պաստառներ , քննարկելով և վերլուծելով գուշակել իրական պատմական պաստառները կամ դրանց կարգախոսները :Օրինակ, կարող ենք ցուցադրել նկարներ կամ պաստառներ 1988-1991թթ. Թատերական հրապարակում տեղի ունեցած ցույցերից :

[1] Արևաուդյան Ա.,Գուլբուդաղյան Ա.,Խաչատրյան Ս.,Խրիմյան Ս.,Պետրոսյան Մ.,Մասնագիտական զարգացման ձեռնարկ,Կրթության ինստ. հրատ.2004 թ.,էջ 42-45

[2] Ինչու՞,Ինչպե՞ս , Գիրք պատմության ուսուցման , Պարադիգմա, էջ 79

,

Կարող ենք ծածկել պաստառի վրա գրված կարգախոսները և թողնել,որ աշակերնտերը գուշակեն ,որ իրադարձությանն է վերաբերում :

Այս թեմայի շրջանակներում կարող ենք տալ հետևյալ հարցերը .

1. Քաղաքական և աշխարհաքաղաքական ի՞նչ իրադարձություն էր տիրում Հայաստանում և աշխարհում,երբ սկսվեց Ղարաբաղյան շարժումը:
2. Ովքե՞ր կարող էին դեմ լինել Ղարաբաղյան շարժմանը և ինչու՞:

Կարող ենք աշակերտներին առաջարկել ստեղծել պաստառներ դասի տվյալ թեմայի մասին ինքնուրույն:Աշակերտները ելնելով թեմայի մասին իրենց ունեցած գիտելիքներից,պետք է ներկայացնեն պատմական այն ժամանակաշրջանը,երբ սկսեց Արցախյան շարժումը:Սովորողները կարող են ներկայացնել պաստառների միջոցով այն քայլերը ,որոնք

փորձեց իրականացնել ԼՂԻՄ մարզխորհուրդը խաղաղ ճանապարհով խնդիրը լուծելու համար (օրինակ՝ 1988թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ մարզխորհուրդը դիմեց Ադրբեջանական ԽՍՀ,Հայկական ԽՍՀ և ԽՍՀՄ գերագույն խորհուրդին՝ մարզը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանի կազմի մեջ ընդգրկելու համար):Կարող են ներկայացնել նաև Սումգայիթյան և Բաքվի ջարդերը և խորհրդային իշխանության անգործությունը այս անարդարության նկատմամբ:

Տվյալ թեմայի պարագայում տեղին կլինի օգտագործել <<պատմությունը թանգարանային ցուցադրությամբ >> մեթոդը:Արցախյան շարժման պատմության թանգարանի ցուցադրության համար աշակերտները կարող են օգտագործել տարբեր նյութեր՝ ներկայացնելով շարժման հրամանտարներին, ցուցադրելով նրանց նկարները,ներկայացնելով կենսագրությունը,նրանց ունեցած ավանդը:

Օրինակ՝ Թաթուլ Կրպեյան

Ծնվել է՝ 1965 ապրիլի 21-ին Հայաստանի Թալինի շրջանի Արեգ գյուղում:1972-1982թթ. սովորել է հայրենի գյուղում,ծառայել է խորհրդային բանակում : 1985-1986 թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել է Թալինի N76 պրոֆտեխնիկական ուսումնարանը,այնուհետև 1987-1990թթ. սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում:Եղել է

<<Միացում>> կազմակերպության անդամ:Իր իսկ հիմնած խմբով 1990թ. սեպտեմբերից մինչև 1991թ. մայիսը ղեկավարել է Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանությունը:Զոհվել է 1991թ. ապրիլի 30-ին՝ <<Օղակ>> գործողության ժամանակ:

Հետաքրքիր կլիներ կիրառել <<ինչ կլիներ, եթե >> այլընտրանքային պատմության մեթոդը:Սա կոգնի աշակերտներին,ավելի խորը դիտարկել պատճառահետևանքային կապերը,որոշել այս կամ այն գործոնի կարևորությունը:

1992թ. մայիսի 4-ին որոշվեց իրագործել <<Հարսանիք լեռներում>> գործողությունը:Սկսվեց Շուշիի ազատագրումը:Ռազմական գործողությունների ընթացքում Արկադի Տեր-Թադևոսյանի կողքին էին գեներալ՝ Գ. Դալիբալթյանը,շտաբի պետ՝ Ֆ.Գզոզյանը և ուրիշներ:Թշնամին ուներ 2300 զինյալ,իսկ գրոհող հայկական ուժերը՝ 1700:Հրամանատարներ էին նշանակվել՝ Ս.Օհանյանը,Վ.Չիթչյանը,Ա.Կարապետյանը,Ա.Ղուլյանը և ուրիշներ:Մայիսի 8-ի գիշորը՝ 2:30-ին, հրետանայնին կրակի ներքո բոլոր 4 ուղություններով սկսվեց գրոհը:Մայիսի 8-ի կեսօրին Շուշիի պաշտպանությունը ճեղքված էր հյուսիսից և արևելքից,ժամը 18:00-ին հայ ազատամարտիկները ազատագրեցին քաղաքի կենտրոնը:Մայիսի 9-ի կեսօրին թշնամին դիմեց փախուստի:

Որ՞ գործոներն են ազդել իրադարձությունների այս ընթացքի վրա:

1. Մայրաքաղաքը սովի եզրին էր,Ստեփանակերտի և հարակից շրջանների անվտանգության համար Շուշիի ազտագրումը անհրաժեշտություն էր:
2. Փետրվարի 26-ին Խոջալուում ադրբեջանցիները կրել էին պարտություն, նրանց մարտական ոգին ընկել էր,անհրաժեշտ էր օգտագործել պահը և հարվածել թշնամուն:

3. Շուշիի ազատագրումը կբարձրացներ ժողովրդի մարտական ոգին և բարոյա-հոգեբանական հարված կհասցներ թշնամուն:

Եղանակային պայմանները արդեն բարենպաստ էին:

Այլընտրանքային այլ սցենար:Եթե չլինեին նշված գործոներից մի քանիսը,հեշտությամբ կփոխվեր ամբողջ պատմական սցենարը:

1. Եթե ադրբեջանական ուժերը պարտություն կրած չլինեին Խոջալուում կամ դրանից առաջ,հայ զինվորականները չէին նախաձեռնի բարդ աշխարհագրական դիրք ունեցող,լավ պաշտպանվող քաղաքի ազատագրումը:
2. Եթե Ստեփանակերտի և հարակից շրջանների բնակիչների վիճակը օրհասական չլիներ,միգուցե հետաձգվեր նաև Շուշիի ազատագրման գործընթացը:
3. Եթե եղանակային պայմանները բարենպաստ չլինեին,չէր հաջողվի իրականցնել նման բարդ գործողություն:

Թեմայի ուսուցման շրջանակներում կարող ենք կիրառել Եռանկյունացում. գնահատիր երեք գործոն միաժամանակ մեթոդը:Աշակերտները պետք է գծեն եռանկյունի և յուրաքանչյուր գագաթի մոտ գրեն թեմայի վերաբերյալ որևէ մեկնաբանություն:Յուրաքանչյուր աշակերտ պետք է մոտենա և գրի իր անուն ազգանունը այն մեկնաբանության մոտ ,որի հետ համաձայն է:

Անհրաժեշտ էր Հայաստանին և Ադրբեջանին:



Ադրբեջանին անհրաժեշտ էր կանգնեցնել հայերի առաջխաղացումը:

Կնքվեց Ռուսաստանի ազդեցության ներքո:

,

1994թ. մայիսի 12-ից կողմերի միջև հաստատվում և անժամկետ զինադադար :

Մեկնաբանություն 1. Զինադադարը հաստատվում է, որովհետև Ադրբեջանին այլ ելք չէր մնում , քան կանգնեցնել հայերի առաջխաղացումը :

Մեկնաբանություն 2. Զինադադարը հաստատվում է , քանի որ գործընթացը տեղի էր ունենում միջազգային , մասնավորապես Ռուսաստանի ազդեցության ներքո :

Մեկնաբանություն 3. Զինադադարը հաստատվում է , քանի որ երկու երկրներին էլ հարկավոր էր վերականգնել անկում ապրող սեփական տնտեսությունները :

Կիրառենք պատմության առեղծվածի բացահայտում մեթոդը - Մոնթե Մելքոնյանի մահը :

Աջակցող հարցեր – ո՞րտեղ սպանվեց Մոնթե Մելքոնյանը, ինչու՞ էր Մոնթեն գտնվում այնտեղ :

Ըստ պաշտոնական տեղեկությունների Մոնթե Մելքոնյանը զոհվել է 1993թ. հունիսի 12-ին ադրբեջանական զրահամեքենայի կրակոցից, երբ հետախուզական նպատակով այցելել էր Աղդամի շրջանի Մարզիլի գյուղի մատույցներ :

Շահագրգիռ ի՞նչ կողմեր կային Մ. Մելքոնյանի սպանության մեջ :

Տարիների ընթացքում Մոնթեն հակառակվել էր բազմաթիվ մարդկանց: Ըստ Մոնթեի եղբոր տեղեկությունների, մարդասպանը վարձատրվել է սպանության համար [3]:Կա վարկած,որ Մոնթեն թակարդն է ընկել , իսկ այդ թակարդը լարել էին ոչ թե թշնամու զինվորները , այլ իրեն մոտ մարդիք:

[3] https://hetq.am/hy/article/20883

Ինչպես կարող էր մարտերի փորձառու վետերանը սպանվել մի լքված գյուղում և գնալ թշնամու տանկի ուղղությամբ ու հակառակորդին շփոթել իր մարտընկերների հետ:Ըստ մեկ այլ վարկածի,Մոնթեին սպանել են թուրքերը:

Ինչու՞ սպանեցին Մոնթե Մելքոնյանին:Մոնթեն հասցրել էր թշնամիներ ձեռք բերել ոչ միայն ի դեմս թուրքական,իսրայելական,ամերիկյան հետախուզական գործակալությունների այլև իդեմս ծայրահեղական հայրենակիցների,<<գաղտնի բանակի>> նախկին խմբավորումների զորագլուխների:

Ռազմական տեսանկյունից մասնագիտական բարձր հմտություններ ցուցաբերելու շնորհիվ,1992թ-ից ստանձնում է Մարտունու պաշտպանական շրջանի շտապի պետի պարտականությունները,նրա ղեկավարությամբ Մարտունին դարձավ Արցախի ամենապաշտպանված և մարտունակ շրջանը: 1993թ. մարտ-ապրիլ ամիսներին նրա ղեկավաությամբ ազատագրվեց նաև Քարվաճառը: Մոնթեն թուրքերի ահ ու սարսափն էր: Մոնթեի ռազմական հաջողությունները և բանակի սերն ու հարգանքը վայելելը հանգիստ չէին թողնում ոչ՝ ներքին,ոչ՝ արտաքին թշնամիներին:Մոնթեին <<սպանեցին>> իր հայրենասիրության բարձր մակարդակը , ճշմարտախոս և սկզբունքային լինելը:

Թեմայի ուսումնառության վերջում կարող ենք կիրառել ճիշտ պատասխանի գուշակում մեթոդը:Օրինակ՝ աշակերտները պետք է բացահայտեն Արցախյան շարժման կարկառուն ներկայացուցիրներիչ մեկի անունը :5 օր աշակերտներին պետք է տրվի որևէ հուշում այդ մարդու գործունեությունից:

Օր 1. 1990թ. դարձել է <<Սասունցի Դավիթ>> կամավորական ջոկատի անդամ:

Օր 2.Նրա ղեկավարությամբ ազատգրվել է Հադրութի շրջանի Տող գյուղը:

Օր 3. 1996թ. եղել է ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալը:

ՕՐ 4. Ստացել է <<Հայաստանի ազգային հերոս >> և <<Արցախի հերոս>> բարձրագույն կոչումները

Օր 5. Կազմել և իրագործել է <<Հարսանիք լեռներում>> գործողությունը:

Խոսքը Արկադի Տեր-Թադեևոսյանի մասին է:

Եզրակացություն

Այսպիսով, կրթական բարեփոխումներն անխուսափելիորեն առաջ են բերում ուսուցչի ստանձնած դերի փոփոխություն: Այդ փոփոխության գործոնները բազմաթիվ են և, ի վերջո, պայմանավորված են նրանով, որ հասարակական արմատական վերափոխումների հետևանքով որակապես փոխվել է սերունդը՝ նրա մտածողությունը, ձգտումներն ու սպասելիքները, և, ուրեմն, փոխվել են նաև կրթական խնդիրները, դրանց իրականացման պայմանները:

Աշակերտը սովորում է ապրելով ու վերապրելով դասի ամբողջ ընթացքը, նրա համար հաճախ ավելի մեծ կարևորություն ունի ուսուցչի կողմից իրեն գիտելիք մատուցելու ձևը, ուսուցման գործընթացում իր ընդգրկվածության եղանակը, քան բուն գիտելիքն ինքնին: Ինչ: Ինչու: Ինչպես: Յուրաքանչյուր ուսուցիչ մինչև դասարան մտնելն ինքն իրեն հարց է տալիս, թե որն է դասի նպատակը և ինչ պետք է սովորեցնի նա աշակերտին:

Ուսուցչի կողմից ակտիվ մեթոդների յուրացումն առանց աշակերտի անմիջական մասնակցության անհնար է: Մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ: Դրանք նպատակ ունեն զարգացնելու սովորողների ինչպես մտավոր, այնպես էլ զգայական կարողությունները: Մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր չկան: Ցանկացած դասարան, դասապրոցես եզակի է, անկրկնելի: Ուսուցչի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել այդ (եզակի) իրավիճակին: Ուսուցչի խնդիրը շարունակում է մնալ աշակերտներին ինքնուրույնաբար կարդացածը հասկանալ սովորեցնելը, գլխավորը երկրորդականից տարբերելը, ինքնուրույն եզրահանգումներ կատարելը: Այսպիսով, պատմաբան-մանկավարժի խնդիրն է յուրաքանչյուր սովորողի համար ստեղծել այնպիսի նպաստավոր միջավայր, օգտագործել այնպիսի մեթոդներ, որոնց շնորհիվ հնարավոր կլինի դրսևորել նախաձեռնողականություն և ստեղծագործական միտք:

Օգտագործված գրականության ցանկ

1. Արևաուդյան Ա.,Գուլբուդաղյան Ա.,Խաչատրյան Ս.,Խրիմյան Ս., Պետրոսյան Մ.,Մասնագիտական զարգացման ձեռնարկ,Կրթության ինստ. հրատ. 2004 թ

2.Ինչու՞,Ինչպե՞ս , Գիրք պատմության ուսուցման , Պարադիգմա

3.https://hetq.am/hy/article/20883